ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

ՀՐԱՄԱՆ

28 փետրվար 2019 թվականի N 74 -Ա

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշմամբ.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու՝ Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի 2019 թվականի հունվարի 15-ի <<Գնումների համակարգողներ, պատասխանատու ստորաբաժանումներ (մասնագիտական խմբեր) սահմանելու և Ջրային կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 2018 թվականի հունվարի 24-ի N 2-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 9-Ա և 2019 թվականի փետրվարի 11-ի <<Ալեքսանդր Կիրակոսյանին, Արտավազդ Մակարյանին, Կարինե Սարգսյանին և Կարեն Ալեյանին գործուղելու մասին>> N 36-Ա հրամանների պահանջները չկատարելու հանգամանքները պարզելու նպատակով, Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության պետի տեղակալ (ծածկագիր՝ 18/1-2.2-15) Ալեքսանդր Կիրակոսյանի նկատմամբ 2019 թվականի փետրվարի 28-ին նշանակել ծառայողական քննություն:

2. Ծառայողական քննություն վարող նշանակել Ջրային կոմիտեի գլխավոր քարտուղարի տեղակալի պաշտոնակատար Ռուզան Հարությունյանին:

3. Ռուզան Հարությունյանին՝ ծառայողական քննությամբ լրիվ, բազմակողմանի ուսումնասիրել և պարզել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի մոնիթորինգի և վերլուծությունների վարչության պետի տեղակալ (ծածկագիր՝ 18/1-2.2-15) Ալեքսանդր Կիրակոսյանի կողմից սույն հրամանի 1-ին կետում նշված իրավական ակտերի պահանջների և իրեն վերապահված գործառույթների չկատարման հանգամանքները և ներկայացնել գրավոր եզրակացություն:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

2/27/2019

X

ՍԱՄՍՈՆ ԶԱՏԻԿՅԱՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ ԶԱՏԻԿՅԱՆ

2019թ. 02 28

Երևան